

## **Գորիս համայնքի սոցիալական ոլորտի ծրագրերը**

### **1. Գորիս համայնքի սոցիալական կարիքների գնահատում**

<b>Բնակչության թիվ</b>	29,509
<b>Տնային տնտեսությունների թիվ</b>	6,943
<b>Երեխաների թիվ</b>	5,254
<b>Գործազուրկների թիվ</b>	653
<b>«Ընտանեկան նպաստ» համակարգում հաշվառված տնային տնտեսությունների թիվ</b>	869
<b>Հաշմանդամություն ունեցող մարդկանց թիվ</b>	2950
<b>Կենսաթոշակառուների թիվ</b>	3640

2021թ. հուլիս- օգոստոս ամիսներին «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀԿ-ն «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի» և «Ընտանիք և Համայնք» ՀԿ-ի հետ համատեղ Հիլֆսվերկ Ինթերնեյշնի և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ՝ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների» եռամյա ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան և Տաթև խոշորացված համայնքներում իրականացրել է համայնքների սոցիալական կարիքների ուսումնասիրություն: Կարիքների գնահատումն իրականացնելիս օգտագործվել են փաստաթղթերի ավանդական վերլուծության, փորձագիտական հարցումների, ինչպես նաև ծառայություններից օգտվողների հետ ֆոկլոր- խմբային քննարկումների մեթոդները: Ֆոկլոր-խմբային քննարկումներին մասնակցել են հետևյալ սոցիալական խմբերը՝ աղքատության ընտանեկան նպաստ ստացողներ, տարեցներ, հաշմանդամ երեխա ունեցող անձինք և խառը խմբերի ներկայացուցիչներ: Իրականացվել են նաև խորին հարցազրույցներ վերոնշյալ համայնքների մասնագիտացված կառույցների ներկայացուցիչների հետ:

Թիրախային համայնքներում իրականացված ուսումնասիրության արդյունքում դուրս են բերվել ներքոնշյալ հիմնական ընդհանուր խնդիրները՝ ներառյալ ենթակառուցվածքային կամ տնտեսական բնույթի, որոնք անուղղակի (բացասական) ազդեցություն ունեն սոցիալական դաշտի վրա:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում Գորիս խոշորացված համայնքում գործունեություն ծավալող պետական և մասնավոր տարբեր կառույցների ներկայացուցիչներից ԳՈՒՄ ՀԿ-ի գլխավորությամբ 2021թ-ին ձևավորվել է միջոլորտային գերատեսչական ցանց, որը, հիմք ընդունելով համայնքում իրականացված սոցիալական կարիքների ուսումնասիրության արդյունքները, մշակել է Գորիս համայնքի տեղական սոցիալական պլանը:

Գորիս խոշորացված համայնքում բացահայտված խնդիրներն են՝

#### **1. Գործազրկություն, ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ**

##### **1.1. Աշխատանք գտնելու հարցում առավել խոցելի են՝**

- **40-ից բարձր տարիք ունեցողները**, հատկապես կանայք, քանի որ գործատուները հիմնականում ցանկանում են աշխատանքի ընդունել ավելի երիտասարդ աշխատողների:
- **Հաշմանդամություն ունեցող անձինք**, քանի որ գործատուները խուսափում են աշխատանքի ընդունել հաշմանդամներին, նույնիսկ աշխատավարձի մասնակի փոխհատուցման պայմանով:
- **Հաշմանդամություն ունեցող անձանց խնամողները**. Համայնքում չկան այնպիսի ծառայություններ, որոնք կիրականացնեն հաշմանդամություն ունեցող մարդկանց խնամքը մինչև ընտանիքի անդամը աշխատանքից վերադառնա:
- **Երիտասարդները** – Համայնքում առկա աշխատատեղերի սղության և սահմանափակ հնարավորությունների պատճառով երիտասարդները ձգտում են աշխատանք գտնել Երևան քաղաքում:

## **1.2. Ժամանցի, ակտիվ շփման կարիքի բավարարման համար հնարավորությունների պակասը.**

- Տարեցները կարիք ունեն շփման, ինքնաարտահայտման, իրենց գիտելիքներն ու հմտություններն իրացնելու: Այդ պատճառով կարիք են ունենում մի վայրի ու միջավայրի, որտեղ կարող են հավաքվել, գրուցել, մասնակցել որոշակի միջոցառումների, իրենք կատարեն որոշակի աշխատանքներ, իրենց գիտելիքներն ու հմտությունները փոխանցեն երիտասարդներին, սակայն նման հնարավորություն չկա:
  - Երեխաների և երիտասարդների համար զարգացման և ժամանցի ապահովման հնարավորությունները խիստ անհամապատասխան են պահանջարկին և տեսականու արդիական ձևերին, որոնք հասանելի են Երևանում և մի քանի խոշոր քաղաքներում:
- Կարիքները վերաբերում են՝**
- արդիական մասնագիտությունների հետ կապված արտադարձական խմբակների ստեղծմանը (ծրագրավորում, դիզայն, անիմացիա, ռոբոտաշինություն և այլն),
  - կրթական կենտրոնների հիմնմանը,
  - երեխաների նախասիրությունների և հետաքրքրությունների բացահայտման համար անհրաժեշտ ու տարբեր հմտությունների զարգացման համար խմբակների ստեղծման անհրաժեշտությանը,
  - երիտասարդների համար ոչ ավանդական և ոչ ֆորմալ կրթական հնարավորությունների ստեղծմանը:

## **2. Սոցիալական աջակցության ծառայությունների սակավություն, մարդկանց կարիքներին անհամապատասխանություն, դրանց տեսականու ծածկույթի անբավարարություն, մարչելիության խնդիր**

- Սոցիալապես անապահով ընտանիքները, որոնք թոշակ կամ նպաստ չեն ստանում և տեղեկացված էլ չեն միանվագ և պարբերաբար տրամադրվող դրամական օգնություն ստանալու կարգի մասին:

Որքան անապահով է ընտանիքը եկամուտների տեսակետից և որքան շատ են այդ ընտանիքում տարբեր խոցելիություն ունեցող անձիք՝ հաշմանդամություն, քրոնիկ հիվանդություն, անչափահաս մանկահասակ երեխաներ և այլն, այնքան ցածր է տեղեկացվածությունը գործող աջակցային ծառայությունների և դրանց ընթացակարգերի վերաբերյալ, ինչը հանգեցնում է **մարգինալացման:**

**Ֆև հանդիպման մասնակից**

### **3. Մասնագիտացված ծառայությունների անբավարարություն և ցածր հասանելիություն:**

#### **3.1. Մաքրուցվող սոցիալական ծառայություններից բավարարվածության խնդիրը**

- Բոլոր համայնքներում դրամական՝ աղքատության, երեխայի խնամքի համար տրվող և այլն նպաստներից օգտվող շահառուները նշում էին այդ նպաստների չափի՝ կյանքի նվազագույն պայմանների ապահովման համար պահանջվող չափի հետ խիստ անհամապատասխանության խնդիրը, դժգոհ էին նպաստի չափերից այն հիմնավորմամբ, որ այն թույլ չի տալիս ընտանիքի համար որևէ էական հարց լուծել՝ անգամ երեխաների համար նվազագույն սննդապահովման հարցը: Անշուշտ, նույնը վերաբերում էր նաև կենսաթոշակի, հաշմանդամության թոշակի և այլ դրամական աջակցության չափերին:
- Հարցվածները դժգոհություն էին հայտնում իրենց տարածքում մասնագիտացված սոցիալական ծառայությունների բացակայությունից/պակասից, մասնավորապես հաշմանդամություն ունեցող երեխաների, տարեցների, երիտասարդների համար, ինչպես նաև համայնքում զարգացնող/խթանող ծառայությունների անբավարարությունից: Բացի համընդհանրական՝ դպրոց, պոլիկլինիկա, մանկապարտեզ (ոչ բավարար տեղերով) և գործող մեկ կամ երկու առանձին ծառայությունների, որոնք մատուցվում են ՀԿ-ների կողմից և ըստ էության կայուն չեն, այլ ծառայություններ համայնքներում չկան:
- Խոշորացված համայնքների պարագայում հիմնականում գործող ծառայությունները առկա են հենց վարչական կենտրոնում, մինչդեռ մյուս տարածքներում/գյուղերում խիստ անհամաչափ է ծառայությունների տեղակայումը, իսկ գործող ծառայությունները մոբիլ-արտագնա տարբերակներ չունեն: Ստացվում է, որ ծառայությունների կարիք ունեցող մեծ թվով մարդիկ դուրս են մնում ծառայություններից:
- Համայնքներում առկա է թեքահարթակների խնդիր. համայնքի ոչ բոլոր հատվածներում կան թեքահարթակներ, եղածներն են ճիշտ չեն կառուցված: Համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջնային խնդիր է նաև հասարակական տրանսպորտի հասանելիության հարցը: Անձինք, ովքեր ունեն հենաշարժողական խնդիրներ, չեն կարողանում համայնքի տարբեր հատվածներ հասնել, քանի որ չկա հարմարեցված հանրային տրանսպորտ:
- **Բնակարանաշինության պակաս.** Գորիսում շատ են դեռևս Բաքվից գաղթած փախստականները, ովքեր շարունակում են ապրել տնակներում՝ ավելի քան 30 տարի: 2020թվականին 44-օրյա պատերազմից ետո Գորիս համայնքում տեղակայված են 100-ավեր ընտանիքներ, ովքեր ևս բնակարանային խնդիրներ ունեն:

#### **3.2. Մասնագիտական ներուժի խնդիրը համայնքներում**

- Գորիս համայնքում հարցվողները նշում էին անբավարար բժշկական կադրերի և մասնագիտացված ծառայությունների պակասի մասին:
- Անհրաժեշտ են լավ վերապատրաստված հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ, էրգոթերապևտներ, ֆիզոթերապևտներ:
- **Վերականգնողական ծառայությունների բացակայություն.** Ծառայություններ չկան հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Համայնքում չկան նաև

վերականգնողական կենտրոններ, չկան մասնագիտական ծառայություններ հատուկ կարիքներ ունեցող երեխաների և, առհասարակ, նաև մեծահասակների համար:

- **Ներառականության պակաս.** Հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար բացի մասնագիտական ծառայությունների բացակայությունից, բացակայում է նաև կրթական հաստատություններում ներառական միջավայրը:

#### **4. Համայնքի ֆիզիկական պայմանների հետ կապված խնդիրներ.**

- **Լուսավորության խնդիրը.** Հարցվողներից ոմանք նշում էին փողոցների անբավարար լուսավորության խնդրի մասին կամ ընդհանրապես գիշերային լուսավորության բացակայության մասին:
- **Խաղահրապարակների սակավություն/անբավարարությունը.** Երեխաները չունեն հարմարեցված խաղահրապարակներ, ոչ բոլոր բակերում են ստեղծված անվտանգ պայմաններ երեխաների խաղալու համար:
- **Թափառող շների հետ կապված հարցերը.** Բնակիչները վախենում են երեկոյան ժամերին դուրս գալ տներից, չկա կառույց ԹԿՎԿ, որը կարողանա զբաղվել թափառող շների հարցով:

## **2. Գորիս համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը և նպատակները**

Գորիսը խոշորացված համայնք է, որտեղ գործում են բնակչության սոցիալական պաշտպանության համալիր ծառայություններ՝ ներառյալ **կրթություն, զբաղվածություն, առողջապահություն**: Համայնքի բոլոր բնակավայրերում գործում են երեխաների խնամքի հասանելի ծառայություններ, գործում է վերականգնողական կենտրոն:

Համայնքում առկա է տարեցների խնամքի և ժամանցի կենտրոն, որը գործում է շուրջօրյա: Համայնքն ունի նաև Ընտանիքների աջակցության և զարգացման շուրջօրյա կենտրոն:

Համայնքի բոլոր բնակավայրերի հանրային վայրերը և հաստատությունները հարմարեցված են հատուկ կարիքներ ունեցող մարդկանց համար: Համայնքում առկա է ներառական միջավայր:

Համայնքում գործում է փոքր ու միջին բիզնեսի աջակցման կենտրոն, որը մատուցում է մատչելի ծառայություններ:

Կրթական համակարգը բավարարում է բոլոր տարիքային խմբերի կարիքները, նպաստում է սովորողների զարգացմանը, այն որակյալ և հասանելի է: Համայնքն ունի զարգացած տնտեսական ենթակառուցվածքներ:

Համայնքում առկա են հասանելի և որակյալ առողջապահական ծառայություններ:

Համայնքի սոցիալական ենթակառուցվածքները ապակենտրոնացված են և հասանելի են համայնքի բոլոր բնակիչներին:

Համայնքի սոցիալական կառույցները սերտ համագործակցում են Արցախի և ՀՀ այլ մարզերի համապատասխան կառույցների հետ: Համայնքը սոցիալական ոլորտի փորձով ներկայանում է ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային հարթակներում:

Նշված տեսլականին հասնելու համար սահմանվել են հետևյալ նպատակները՝

- Նպաստել Գորիս համայնքի խոցելի ընտանիքներում բռնությունների, ամուսնալուծությունների կանխարգելմանը՝ զարգացնելով ընտանիքներում կենցաղավարման, ծնողավարման և տնտեսվարման հմտությունները:
- Նպաստել Գորիս համայնքի երեխաների, երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը՝ աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրման, վերամասնագիտացման և ուղղորդման միջոցով:
- Աջակցել Գորիս համայնքի հատուկ կարիք ունեցող երեխաների առողջապահական, սոցիալ- հոգեբանական, ֆիզիկական կարիքների բավարարմանը և նպաստել ներառական միջավայրի ստեղծմանը:
- Նպաստել Գորիս համայնքի տարեցների խնամքի, ժամանցի ապահովմանը և ակտիվ կենսակերպի կազմակերպմանը՝ երաշխավորելով արժանապատիվ և երջանիկ ծերություն:

Հիմք ընդունելով համայնքի սոցիալական ոլորտի տեսլականը, նպատակները և արդյունքները՝ անհրաժեշտ գործողությունները սահմանվել են տրամաբանական հենքի մեթոդաբանությամբ, որոնք ներկայացված են Աղյուսակ 15.-ում:

Աղյուսակ 15. Համայնքի կայուն զարգացման հասնելու խնդիրները, արդյունքները և գործողությունները (սոցիալական ոլորտ)

h/h	Խնդիրները	Միջանկյալ արդյունքները	Անհրաժեշտ գործողությունները	Պահանջվող ռեսուրսները

4	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանու թյուն	Ընտանիքների աջակցման և զարգացման կենտրոն	<ul style="list-style-type: none"> <li>✓ Ծառայությունների մատուցման համար տարածքի ձեռք բերում, բարեկարգում, հարմարեցում և ապահովում գույքով</li> <li>✓ Մասնագետների ներգրավում և վերապատրաստումների իրականացում</li> <li>✓ Շահառուների իրազեկում կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների մասին</li> <li>✓ Ընտանիքների խորհրդատվական աջակցություն</li> </ul>	Կամավորներ, համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություն ներ, միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք
		Մասնագիտակ ան կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոն	<ul style="list-style-type: none"> <li>✓ Ծառայությունների մատուցման համար տարածքի ձեռք բերում, բարեկարգում, հարմարեցում և ապահովում գույքով</li> <li>✓ Համայնքում աշխատաշուկայի վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում</li> <li>✓ Շահառուների իրազեկում և վերապատրաստումների իրականացում</li> <li>✓ Համագործակցություն համայնքում գործող կազմակերպությունների հետ՝ ներառյալ համայնքային, մարզային և հանրապետական կառույցները</li> </ul>	
		Հատուկ կարիքներ ունեցող երեխաների վերականգնող ական ծառայություննե ր	<ul style="list-style-type: none"> <li>✓ Ծառայությունների մատուցման համար տարածքի ձեռք բերում, բարեկարգում, հարմարեցում և ապահովում գույքով</li> <li>✓ Մասնագետների ներգրավում և վերապատրաստումների իրականացում</li> <li>✓ Շահառուների իրազեկում կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների մասին</li> </ul>	

		Տարեցների ժամանցի և խնամքի ծառայություններ	<ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքում գործող ցերեկային խնամքի կենտրոնին, Վետերանների տանը, Բարեգործական ճաշարանին աջակցության մեծացում,</li> <li>✓ Տարեցների, հաշմանդամների ինտեգրում հասարակական կյանքին՝ սոցիալական, մշակութային և այլ ծրագրերի միջոցով</li> <li>✓ Սերունդների միջև կապի ամրապնդմանը միտված համալիր միջոցառումներ</li> </ul>	
--	--	--	--	--

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 1.**  
**«Ընտանիքի աջակցման և զարգացման կենտրոնի հիմնում»**  
 (Ծրագրի անվանում)

<b>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</b>	<b>Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը</b>						
<b>Ծրագրի անմիջական նպատակ</b>	<b>Նպաստել Գորիս համայնքի խոցելի ընտանիքներում բռնությունների, ամուսնալուծությունների կանխարգելմանը՝ զարգացնելով ընտանիքներում կենցաղավարման, ծնողավարման և տնտեսական հմտությունները:</b>						
	<b>Ծառայությունից օգտվող շահառուների թիվ</b>	<b>Ելակետային արժեք</b>	<b>Թիրախային արժեքներ</b>				
		<b>2022</b>	<b>2023</b>	<b>2024</b>	<b>2025</b>	<b>2026</b>	<b>2027</b>
		<b>50</b>	<b>120</b>	<b>130</b>	<b>140</b>	<b>150</b>	<b>160</b>
<b>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</b>	<b>1. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ</b>						
	<b>Սենյակների թիվ</b>	<b>Ելակետային արժեք</b>	<b>Թիրախային արժեքներ</b>				
		<b>2022</b>	<b>2023</b>	<b>2024</b>	<b>2025</b>	<b>2026</b>	<b>2027</b>
		<b>-</b>	<b>2</b>	<b>2</b>	<b>2</b>	<b>2</b>	<b>2</b>
	<b>2. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ</b>						
	<b>Մասնագետների թիվը</b>	<b>Ելակետային արժեք</b>	<b>Թիրախային արժեքներ</b>				

		2022	2023	2024	2025	2026	2027
		-	3	4	5	5	5
	3. Համայնքի բնակիչները տեղեկացված են և օգտվում են կենտրոնի ծառայություններից						
	Կենտրոնի մասին տեղեկացված բնակիչներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	1000	2000	4000	8000	10000
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Ծառայության համար համապատասխան փարաձքի ընտրություն</p> <p>1.2. Տարածքի բարեկարգում և հարմարեցում</p> <p>1.3. Գույքի ձեռք բերում և տեղադրում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Մատուցվող ծառայությունների փաթեթի մշակում և ծառայությունների ցանկի հստակեցում</p> <p>2.2. Մասնագետների ներգրավում և վերապատրաստում</p> <p>2.3. Մասնագետների կողմից մատուցվող ծառայությունների գրաֆիկի սահմանում</p> <p>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>3.1 Իրազեկման արշավների կազմակերպում</p> <p>3.2 Ծառայության մասին տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում</p>						
Ծրագրի բյուջեն	25 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար փարաձք, սոցիալական ծառայության մասնագետներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բնակչության շրջանում ընտանեկան խնդիրների մասին չբարձրաձայնելը:						
Ծրագրի հիմնական շահառուները	Խոցելի ընտանիքներ						





	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2022	2023	2024	2025	2026	2027	
		3	5	7	8	10	10	
	3. Համայնքում գործող կառույցների հետ արդյունավետ համագործակցություն							
	Համագործակցող կազմակերպությունների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ					
		2022	2023	2024	2025	2026	2027	
		3	5	7	9	11	13	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ծառայության համար համապատասխան փարածքի ընտրություն 1.2. Տարածքի բարեկարգում և հարմարեցում 1.3. Գույքի ձեռք բերում և տեղադրում  2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Համայնքում թափուր աշխատատեղերի քարտեզագրում 2.2 Թափուր աշխատատեղերը համալրելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների վերլուծություն 2.3 Համայնքում գործ փնտրողների գիտելիքների և հմտությունների համադրում աշխատաշուկայում պահանջվող գիտելիքների և հմտությունների հետ 2.4 Վերլուծության հիման վրա հաշվետվությունների կազմում և հրապարակում  3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 3.1 Համայնքում գործող կառույցների հետ համագործակցության հուշագրերի ստորագրում 3.2 Համագործակցող կազմակերպությունների հետ թափուր աշխատատեղերի և աշխատանք փնտրողների վերաբերյալ տեղեկատվության պարբերական փոխանակում							
Ծրագրի բյուջեն	12 մլն դրամ							
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար փարածք, մասնագետներ							

Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքում տնտեսական ակտիվության նվազում, տնտեսական ճգնաժամ
Ծրագրի հիմնական շահառուները	Երիտասարդներ, գործազուրկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Համայնքում դեռահասներն ու պատանիները չունեն ներկայիս աշխատաշուկայի պահանջարկի վերաբերյալ պարկերացումներ, մասնագիտության ընտրության հարցում նրանց ուղղորդում են հիմնականում ծնողները:</p> <p>Գորիսի տարածաշրջանում ոչ պաշտոնական տվյալներով աշխատանք փնտրողների թիվը 1005 է, որից 820-ը ունեն գործազրկության կարգավիճակ: Աշխատանք փնտրողներից 700-ը կանայք են, 200-ը՝ զբաղված աշխատանք փնտրող:</p> <p>Գորիսում գործում է 2 միջին մասնագիտական քոլեջ, 1 բուհ, 14 դպրոց: Դպրոցներում, կրթական հաստատություններում երեխաների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ չեն իրականացվում, չնայած ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ուսումնական ծրագրի՝ դպրոցներում կամավոր սկզբունքով պետք է իրականացվեն մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպումներ/աշխատանքներ երեխաների հետ:</p> <p>Սակայն դպրոցներում աշակերտների, ուսուցիչների, ծնողների շրջանում կատարված հարցումները փաստում են, որ այս աշխատանքները չեն իրականացվում, կամ որոշ դպրոցներում թողնված է դասղեկների բարի կամքին:</p> <p>Համայնքում Միասնական սոցիալական ծառայության/ՄՍԾ-ի զբաղվածության տարածքային բաժնի կողմից պարբերաբար չի իրականացվում աշխատաշուկայի վերաբերյալ վերլուծություն:</p> <p>Համայնքում թափուր աշխատատեղերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չկան համապատասխան մասնագետներ, ասյինքն համայնքում կա առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն:</p> <p>Համայնքում պարբերաբար տարբեր մասնագետներ ունենում են վերապատրաստման կարիք, և չվերապատրաստվելով՝ աշխատաշուկայում մրցակցությունից դուրս են մնում:</p>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 3.

«Վերականգնողական կենտրոն հաշմանդամություն ունեցող երեխաների համար»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Աջակցել Գորիս համայնքի հատուկ կարիք ունեցող երեխաների առողջապահական, սոցիալ-հոգեբանական, ֆիզիկական կարիքների բավարարմանը և նպաստել ներառական միջավայրի ստեղծմանը:						
	Ծառայությունից օգտվող շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		30	50	70	90	110	110
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ						
	Սենյակների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	2	3	4	5	6
	2. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ						
	Մասնագետների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		3	5	7	9	11	11
	3. Համայնքի բնակիչները տեղեկացված են և օգտվում են կենտրոնի ծառայություններից						
	Կենտրոնի մասին տեղեկացված շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	1000	2000	3000	4000	5000
	Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Ծառայության համար համապատասխան տարածքի ընտրություն 1.2. Տարածքի բարեկարգում և հարմարեցում 1.3. Գույքի և սարքավորումների ձեռք բերում և տեղադրում					
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ							

	<p>2.1 Մաքուցվող ծառայությունների ցանկի հստակեցում</p> <p>2.3 Մաքուցվող ծառայությունների փաթեթի մշակում</p> <p>2.3 Մասնագետների ներգրավում և վերապատրաստում</p> <p>2.4 Մասնագետների կողմից մաքուցվող ծառայությունների գրաֆիկի սահմանում</p> <p>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>3.1 Իրազեկման արշավների կազմակերպում</p> <p>3.2 Ծառայության մասին տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում</p>
Ծրագրի բյուջեն	28 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ
Ծրագրի հիմնական շահառուները	Հաշմանդամություն ունեցող երեխաներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Սյունիքի մարզում՝ մասնավորապես Գորիս համայնքում, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող և հաշմանդամություն ունեցող երեխաների առողջապահական և սոցիալ-հոգեբանական վերականգնողական կենտրոնի բացակայության հարցը մնում է օրակարգային: Մարզում հաշմանդամություն ունեցող հարյուրավոր երեխաներ կան, որոնք մասնակի բուժում են ստանում մայրաքաղաքում, որն առաջացնում է սոցիալական խնդիրներ ընտանիքում: Երկարաժամկետ վերականգնման կարիք ունեցող երեխաները դուրս են մնում բուժման կուրսերից՝ հնարավորությունների բացակայության պատճառով: Միայն Գորիսի տարածաշրջանում՝ Գորիս (74), Տեղ (6), Տաթև (4) խոշորացված համայնքներում առկա պաշտոնական թվերով 138 երեխաներ կան, որից 66-ն ունեն հենաշարժողական խնդիրներ: Ինչպես նաև կան երեխաներ, որոնք չեն գնահատվել: 44-օրյա</p>

	<p>պատերազմից հետո ավելացել է նաև Արցախից տեղահանված 828 չգնահատված երեխա:</p> <p>Հաշմանդամություն ունեցող երեխաների համար մայրաքաղաքում առկա վերականգնողական ծրագրերն ու կենտրոնները հասանելի չեն մարզերի երեխաների համար: Ծնողների մեծ մասը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ երևանում առկա ծառայություններն իրենց երեխաների համար հասանելի դարձնելու: Սյունիքի մարզը մայրաքաղաք Երևանից ամենահեռու գտնվող մարզն է, որն ավելի է դժվարեցնում մարզից համապատասխան երեխաների տեղափոխության հետ կապված խնդիրները: Մարզում չկան հարմարեցված մեքենաներ: Ներկայիս պայմաններում, կարելի ասել, որ հաշմանդամություն ունեցող երեխաները Սյունիքում՝ մասնավորապես Գորիս համայնքում, դատապարտված են անտեսման՝ անհրաժեշտ մասնագիտական վերականգնողական աջակցությունից օգտվելու հնարավորությունների բացակայության պատճառով:</p>
--	---

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 4.**  
**«Տարեցների խնամքի և ժամանցի կենտրոն»**  
 (Ծրագրի անվանում)

<b>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միավորված ծրագիրը</b>	<b>Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը</b>						
<b>Ծրագրի անմիջական նպատակ</b>	<b>Նպաստել Գորիս համայնքի տարեցների խնամքի, ժամանցի ապահովմանը և ակտիվ կենսակերպի կազմակերպմանը՝ երաշխավորելով արժանապատիվ և երջանիկ ծերություն:</b>						
	<b>Ծառայությունից օգտվող</b>	<b>Ելակետային արժեք</b>	<b>Թիրախային արժեքներ</b>				
	<b>Հահառուների թիվ</b>	<b>2022</b>	<b>2023</b>	<b>2024</b>	<b>2025</b>	<b>2026</b>	<b>2027</b>

		60	120	240	280	300	350
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ծառայության մատուցման համար հարմարեցված սենյակներ						
	Սենյակների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		-	2	3	3	3	3
	2. Կենտրոնում առկա են տարեցների համար խնամքի և ժամանցի կազմակերպման ծառայություններ						
	Ծառայությունների թիվը	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		1	3	5	5	5	5
	3. Տարեցներն ակտիվորեն մասնակցում են համայնքում կազմակերպվող հանրային և մշակութային միջոցառումներին						
	Հանրային և մշակութային միջոցառումների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2022		2023	2024	2025	2026	2027	
-		2	4	5	7	7	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1.Ծառայության համար համապատասխան տարածքի ընտրություն						
	1.2. Տարածքի բարեկարգում և հարմարեցում						
	1.3. Գույքի և սարքավորումների ձեռք բերում և տեղադրում						
	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1 Մատուցվող ծառայությունների ցանկի հստակեցում						
	2.2 Ծառայությունների փաթեթի մշակում						
	2.3 Մասնագետների ներգրավում և վերապատրաստում						
	2.4 Մասնագետների կողմից մատուցվող ծառայությունների գրաֆիկի սահմանում						
	3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
3.1 Համայնքում մշակութային կազմակերպությունների հետ համագործակցության ձևավորում							
3.2 Մշակութային միջոցառումներին տարեցների մասնակցության ապահովում (տրանսպորտային ապահովում, իրազեկում)							

Ծրագրի բյուջեն	20 մլն դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ, տրանսպորտ
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ, իրազեկման ցածր մակարդակ
Ծրագրի հիմնական շահառուները	Միայնակ, հատուկ (խնամք, սոցիալ-հոգեբանական աջակցություն) ծառայությունների կարիք ունեցող քաղաքացիներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2027
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Թոշակի անցնելը քաղաքացիներին մղում է մեկուսացման, հանրային «անպիտանելիության» զգացման, անտեսման, նվազում է քաղաքացիների սոցիալական ակտիվությունը, մոտիվացիան, որը ազդում է նաև նրանց ընտանիքներում ընտանեկան կոնֆլիկտների առաջացման վրա:</p> <p>Հասարակական կյանքում ակտիվ անձինք թոշակի անցնելուց հետո ապաստարանում են և իրենց մոտ զարգանում է ֆիզիկական, հասարակական կյանքին մասնակցելու անտարբերություն և պասիվություն:</p> <p>Պարտադիր թոշակի անցնելը, ստիպում է թոշակառուներին ապրել աշխատանքային ճգնաժամ, որը ազդում է նրանց հոգեբանության, ֆիզիկական պատրաստվածության, հաղորդակցման վրա: Ազդում է նրանց մոտիվացիայի՝ նոր հմտություններ ձեռք բերելու, հմտություններով երիտասարդների հետ կիսվելու վրա:</p> <p>Միևնույն ժամանակ քաղաքացիները չեն կարողանում ապահովել իրենց լիարժեք առօրյան: Հնարավորություն չունեն հանդիպելու իրենց տարիքակիցների հետ, կազմակերպել իրենց ժամանցը: Համայնքում կան շատ քաղաքացիներ, որոնք ունեն խնամքի և ուշադրության կարիք, որը չի պահանջում լուրջ բժշկական միջամտություններ, սակայն անհրաժեշտ են տարրական միջոցներ՝ խորհրդատվություն, հոգատար վերաբերմունք, մտերմիկ զրույց և ժամանց:</p>